ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 07 » հոկտեմբերի 2020 թվականի N 13 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻՆ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 6.1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման հավելված N 2-ի 19-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման հավելվածի 19-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը ***որոշում է՝***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից համաձայնեցված Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակին:

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 3-ի N 1121-Լ որոշման հիման վրա (աշխատանքային

օրենսդրության վերահսկողության վարչություն ստեղծելու և աշխատանքի վերահսկողության վարչությունը աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը միացնելու վերաբերյալ) մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և դրանից բխող հաստիքացուցակին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) կողմից համաձայնություն ստանալու դեպքում, ինչպես նաև հետագայում Գրասենյակի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայությունը կարգավորող իրավական ակտերից բխող կամ տեխնիկական բնույթի փոփոխությունների հիման վրա մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**